# ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 4-ին, կիրակի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի օրը, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և կուսակրոն քահանա ձեռնադրեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Եղիայանին, Խորեն սարկավագ Պալյանին, Հակոբ սարկավագ Պողոսպալյանին և Հակոբ սարկավագ Գարաջյանին։

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, կատարվեց ընծայացուների կոչման սրտառուչ արարողությունը Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ։

Շարականներից, սաղմոսներից, սուրբգրական համապատասխան ընթերցումներից և աղոթքներից հետո, ընծայացուները հրապարակավ հայտնեցին «կամօք, յօժարութեամբ սրտի» քահանայական քաղցր լուծը ստանձնելու իրենց հոժարությունը։

Այնուհետև հարց ու պատասխանի ձևով ընտվեց ընծայացուների հոգևոր և բարոյական պատրաստվածությունը, «ուսումն քահանայութեան լիով և գիտութիւն աստուածային օրինաց»։ Նրանք խոստացան և հանձն առին «ամենայն պատրաստութեամբ կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և զհայրապետացն», և ապա տվեցին «զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոց»։

Քահանայական կոչման արարողությունը եզրափակվեց «Ուղղափառ դաւանութիւն հաւատոյ» բարձրաձայն հրապարակային ընթերցումով։

Կիրակի օրը կատարվեց «ձեռնադրութիւն քահանայի», ըստ Մաշտոցի ցուցմունքների։

Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվեց Մայր Տաճար՝ ձեռնադրության սուրբ պատարագը մատուցելու։ Ս. Սեղանին սպասարկում էին գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, Տ. Հուսիկ և Տ. Մուշեղ վարդապետները, Տ. Կոմիտաս, Տ. Հակոբ և Տ. Հովհաննես քահանաները և սարկավագների խումբը։

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամները, արտասահմանյան ուխտավորներ և նորընծաների ծնողներն ու հարազատները։

Սուրբ պատարագը միևնույն հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած», և ապա, «Այսօր աստուածութիւնն զուարճանայ» շարականով ընծայալները ձախակողմյան դասից ծնրադիր բարձրանում են դեպի Ս. Սեղան։

Խարտավիլակի պաշտոնը կատարում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը։

Ձեռնադրության համապատասխան պատշաճ և գեղեցիկ սաղմոսների, երգերի և աղոթքների միջոցով ձեռնադրող Վեհափառ Հայրապետը հայցում է «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ», որից հետո ընծայալները հրապարակավ մի անգամ ևս տալիս են իրենց անձի վկայությունը սիրով, ազատ կամքով քահանայության քաղցր լուծը ստանձնելու համար։

Հարկավոր է նաև ժողովրդի վկայությունը։ «Արժանի են» միաբերան երգված վկայությամբ ժողովուրդը իր վստահությունն է հայտնում նորընծաների հուսալիության մասին։

Այժմ ձեռնադրության խորհրդավոր պահն է։ Ընծայալները, ծնրադիր, բոլորված

Վեհափառ Հայրապետի շուրջ, լսում են նրա աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի Սեղանոյ Տեառն Աստուծոյ»։

Այնուհետև սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջույն»-ի պահը։

Ձեռնադրության մասին մեծ և բովանդակալից աղոթքների ընթերցումից հետո, ձեռնադրող Վեհափառ Հայրապետը «արկանէ զփիլոնն», «դնէ զսաղաւարտն ի գլուխ», «զդեցուցանէ զշուրջառն», «կապէ զգօտին» ընծայալների, տալով նրանց քահանայության իշխանություն։

Ապա «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողությամբ, Վեհափառ Հայրապետը առնում է Ս. Մյուռոնը և «օծանէ սրբարան մեռոնաւ զճակատս» և ձեռքերը նորընծաների, վերանվանելով Հովհաննես սարկավագին՝ Տ. Գրիգոր աբեղա, Խորեն սարկավագին՝ Տ. Մեսրոպ աբեղա, Հակոբ սարկավագ Պողապալյանին՝ Տ. Ներսես աբեղա և Հակոբ սարկավագ Գարաջյանին՝ Տ. Եղիշե աբեղա։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիսավոր աղոթքով և օրհնությամբ ընծայալներին է հանձնում սկիհը, մաղդան և բուրվառը ու հրամայում է նրանց առաջին անգամ օրհնել հավատացյալներին։

Զափազանց հուզիչ էր և սրտագրավ այն պահը, երբ նորընծաները, օրհնելով հավատացյալներին, բարեմաղթում են «Խաղաղութի՞ւն ամենեցուն»։

Նորընծաների այս օրհնությամբ էլ վերջանում է օծման սուրբ արարողությունը։

Այժմ քարոզի պահն է։ Նորընծաները, քահանայական լրիվ զգեստավորման մեջ և սաղավարտ ի գլուխ կանգնած Ավագ Ս. Սեղանի աջակողմյան դասում, լսում են իրենց Հոգևոր Հոր հայրական խրատները։



ԱՇԵԱՐՀԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Այդ օրը կրկնակի ուրախություն էր Մայր Աթոռի համար։ Վեհափառ Հայրապետը գեղեցկորեն խոսում է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով մարմին առած Միածնաէջ Մայր Տաճարի խորհրդի և ապա Մայր Աթոռի հայ ժողովրդի կյանքում կատարած և կատարելիք հոգևոր և բարոյական, ազգային և հայրենասիրական մեծ առաքելության մասին և ձեռնադրության սուրբ խորհուրդը կապում է Մայր Աթոռի հավերժության, կենսունակության և անսասանության գաղափարի հետ, սրտագինս բարեմաղթելով, որ Մայր Աթոռի երիտասարդ նոր միաբանները իրենց հավատով, նվիրմամբ և ծառայության ոգով լինեն «մշակք առանց ամօթոյ»։

Սուրբ պատարագը շարունակվում է։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, մինչ Մայր Տաճարում հավատավոր բազմությունը երկյուղածորեն մոտենում է նորընծաների օծյալ աջերը համբուրելու։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ նորընծաների, տրվում է ճաշկերույթ։ Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Ճաշկերույթին մասնակցում են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և հրավիրյալներ։

Երեկոյան ժամերգությունից առաջ, ըստ Զեռնադրության Մաշտոցի հրահանգի, կատարվում է «Օրհնութիւն աբեղայի», որի ընթացքում Վեհափառ Հայրապետը վեղարի տվչության հետ կապված մասնավոր աղոթքներով, «Հանէ զչբռունն և զգեցուցանէ զվեղարն և ասէ. Աստուած զգեցուցանէ քեզ զնոր մարդն և եղիցիս դու հպատակ և հնազանդ եկեղեցւոյ կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ և ի գիշերի»։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջանում է վեղարի տվչության արարողությունը։



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԱԼԻՍ Է ԻՐ ԽՐԱՏԱԿԱՆԸ ՆՈՐԸՆԾԱ ԱԲԵՂԱՆԵՐԻՆ

Նորընծաներին սրտագին և ջերմ խոսքերով շնորհավորում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Եղնիկ սրբազանները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ պրոֆ. Ա. Առաքելյանը և Ա. Տիրացյանը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Գ. Բեքմեզյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ուրիշներ։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնալից վեղարավորներին և բարեմաղթում, որ նրանք այսուհետև ևս և մանավանդ ավելի պայծառ գիտակցությամբ և տքնաջան նվիրումով, պատվով ու սրբությամբ ծառայեն Աստուծո Ս. Սեղանին, հայ հավատավոր ժողովրդին և մեր Հայրենիքին՝ մեր նախնյաց եռամեծ և լուսապսակ վարդապետների շավղով։